



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

« ԺԻ » 07 2015թ. N 43-1

ք. Երևան

Գնումների համակարգման

հանձնաժողով ստեղծելու մասին

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2015 թվականի մայիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքի բարեփոխման 2015 թվականի ծրագիրը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N 548-Ա որոշմամբ նախատեսված Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ կարիքների համար գնումների իրականացման անհրաժեշտությունը, 01.07.2015թ. կնքված N 88-15 պայմանագիրը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել գնումների համակարգման հանձնաժողով հետևյալ կազմով՝

- ա) Գ. Նազարյան, Փոխտնօրեն, Հանձնաժողովի նախագահ
- բ) Ա. Ստեփանյան, Ստանդարտացման և հետազոտությունների բաժնի պետ
- գ) Հ. Հովսեփյան, Վարչակազմակերպչական բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար
- դ) Հ. Պողոսյան, ՓԼ ղեկավար
- ե) Գ. Մաթոսյան, Նավթամթերքի և ֆիզիկա-քիմիական ՓԼ ղեկավար

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ԳԻՇՏ Է  
ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՓԲԸ  
ԶՎԵՏՈՒԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏ  
Կ. Մեակյան  
« ԺԻ » 07 2015թ.

- զ) Ռ. Ազարյան, Մարքետինգի և վաճառքների բաժնի պետ
- է) Ա. Չուխաջյան, Քարտուղարության գլխավոր մասնագետ

2. Հանձնաժողովին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել հետևյալ աշխատանքների իրականացումը.

ա) Ստանդարտների ազգային ինստիտուտի ՀԳՄ-ների գործունեության հաշվառման էլեկտրոնային բազայի ծրագրի մշակման և ներդրման աշխատանքներ իրականացնող մասնագիտացված կազմակերպության ընտրությունը և ծառայությունների գնման կազմակերպումը,

բ) Լաբորատոր կարողությունների զարգացում՝ լաբորատոր սարքերի համալրող արագամաշ սարքավորումների և փորձարկման ստանդարտ նմուշների գնումների կազմակերպումը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Տնօրեն՝



Ե. Ազարյան